

## ՎԱՐԴԱՆՈՒԾ ՊՈՂՈՍՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի  
սահմանադրական իրավունքի ամբիոնի հայցորդ

### ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՀԻՄԱԽՆԴԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Ժամանակակից ժողովրդավար հասարակությունները զերծ չեն սոցիալ-քաղաքական հականարտություններից, ինչն էլ երբեմն կարող է և հանգեցնում է այնպիսի բախումային իրավիճակների, երբ իրավիճակը դուրս է գալիս վերահսկողությունից և սպառնում է երկրի սահմանադրական կարգին: Ահա այս պայմաններում է, որ առաջանում է մարդու որոշակի իրավունքների սահմանափակման հիմնախնդիրը՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանաման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության:

Պետությունների ժողովրդավարացման ճանապարհին կարևոր խնդիր է նաև մարդու իրավունքների սահմանափակման օրինականության և հիմնափորփառության խնդիրը: Ժողովրդավար պետության թիվ մեկ պարտականությունն է մարդուն իր իրավունքների անօրինական սահմանափակումներից զերծ պահելը:

Մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումը իրականացվում է երկու բարդ իրավական համակարգերի փոխազդեցության միջոցով՝ ներպետական և միջազգային: Մարդու իրավունքները սահմանափակել մարդու իրավունքները միջազգային իրավական ակտերի հիման վրա, մյուս կողմից՝ պաշտպանել մարդու իրավունքներն կամային սահմանափակումներից: Վերջին հաշվով այդ փոխազդեցության արդյունքում է ձևավորվում պետության կողմից մարդու և քաղաքացու իրավունքների հնարավոր սահմանափակումների շրջանակը, որը նպաստում է մարդու իրավունքների լիարժեք պաշտպանության:

Արտակարգ և ռազմական դրության ժամանակ մարդու իրավունքները ժամանակավոր սահմանափակող նորմերն ամրագրված են Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 15-րդ հոդվածում, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 4-րդ հոդվածում,

(այսուհետ՝ Դաշնագրի), ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածում:

Կոնվենցիայի «Արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղում» վերտառությամբ 15-րդ հոդվածի 1-ի մասի համաձայն. «Պատերազմի կամ այլ արտակարգ դրության ժամանակ, որը սպառնում է ազգի կյանքին, ամեն մի Բարձր պայմանափորփող կողմ կարող է միջոցներ ձեռնարկել՝ սույն կոնվենցիայով ամրագրված իր պարտավորություններից շեղվելով միայն այն չափով, որքանով դա պահանջում է դրության լարվածությունը, պայմանով, որ նման միջոցները անհամատենելի չեն միջազգային իրավունքով ստանձնած նրա մյուս պարտավորությունների հետ»<sup>1</sup>: Այսինքն՝ Եվրոպայի խորհրդի ցանկացած անդամ-պետություն կարող է շեղվել Կոնվենցիայով ստանձնած իր պարտավորություններից, բայց միայն այն չափով, որքանով դա պահանջում է դրության լրջությունը:

Նմանատիպ կարգավորում է տրված Դաշնագրի 4-րդ հոդվածի 1-ին մասով, որի համաձայն. «Արտակարգ դրության ժամանակ, որի դեպքում վտանգված է ժողովրդի կյանքը և, որը հայտարարված է պաշտոնապես, սույն դաշնագրի մասնակից պետությունները կարող են միջոցներ ձեռնարկել ի շեղումն սույն Դաշնագրով ստանձնած իրենց պարտավորությունների միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակի լրջությունը, պայմանով, որ այդ միջոցներն անհամատենելի չեն միջազգային իրավունքի համաձայն իրենց մյուս պարտավորությունների հետ...»<sup>2</sup>:

Կոնվենցիայի և Դաշնագրի բովանդակությունից բխում է, որ պետությունը կարող է նշանակած հոդվածների վրա հղում անել, երբ առկա են հետևյալ երկու պայմանները՝

- ստեղծված իրավությունը պետք է համապատասխանի արտակարգ դրության չափանիշներին, որի դեպքում վտանգված է ազգի կյանքը,

- անդամ-պետությունը պետք է պաշտոնապես հայտարարի արտակարգ դրություն հաստատելու մասին:

Վերջին պահանջը կարևոր նշանակություն ունի օրինականության և իրավունքի գերակայու-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

թյան սկզբունքների պահպանման համար, հատկապես այն ժամանակաշրջանում, երբ այդ սկզբունքների պահպանումը ավելի քան կարևոր է: Արտակարգ դրույթուն հայտարարելով՝ պետությունները պետք է գործեն իրենց սահմանադրական և օրենսդրական դրույթների շրջանակներում, որոնք կարգավորում են արտակարգ դրույթյան հաստատման և իրականացման կարգը: ՍԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) հետևում է, որը վերոնշյալ ներպետական օրենսդրական ակտերը հնարավորություն տան և ապահովեն Դաշնագրի 4-րդ հոդվածի իրականացումը: Որպեսզի Հանձնաժողովը կարողանա իրականացնել իր խնդիրները, անդամ-պետությունները պետք է իրենց հաշվետվության մեջ նշեն, Դաշնագրի 40-րդ հոդվածին համապատասխան, «...բավարար և ճշգիրտ տեղեկատվություն իրենց օրենսդրությունների և արտակարգ դրույթյան հաստատման փորձի մասին»:

Միջազգային իրավական ակտերը բույլ են տպիս պետություններին որոշակի պայմաններում ժամանակավորապես սահմանափակել մարդկանց մի խումբ իրավունքների իրականացումը, ինչպես նաև արտակարգ և ուազմական դրույթյուն հաստատելու պայմանների առկայության դեպքում ետք կանգնել իրենց վրա դրված մարդու իրավունքների պաշտպանության միջազգային պարտավորությունների իրականացումից և կասեցնել այդ ոլորտում ազգային օրենսդրության գործողությունը: Սակայն, սահմանափակումները իրականացվում են այնքանով, որքանով որ անհրաժեշտ է պետության անվտանգության պահպանան համար, բայց այդ սահմանափակումները չպետք է հակասեն միջազգային իրավունքից բխող պարտավորություններին:

Պետությունների կողմից այդ բարդ խնդիր իրականացմանը մեծ չափով օգնեց Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից տված «արտակարգ դրույթյուն» հասկացության մեկնարանությունը, որի համաձայն՝ «արտակարգ դրույթյուն ասելով պետք է հասկանալ հետևյալ պայմանների առկայությունը՝

- վտանգը պետք է լինի իրական և անկանխելի,
- նրա հետևանքները պետք է վտանգավոր լինեն ամբողջ ազգի համար,
- պետք է վտանգված լինի հասարակության կազմակերպչական կյանքը,
- կրիզիսը կամ վտանգը պետք է կրեն բացահիկ բնույթը այդ իմաստով:

Այսինքն՝ «արտակարգ դրույթյուն» հաստատելու համար պետությունը պետք է ապացուի, որ իր պետությունում կա այսպիսի պայմաններ և, որ խնդրի այլ ձևով կարգավորումը անհնար է:

Քննարկվող հիմնախնդիրը առավել արդի-

ական է Հայաստանի Հանրապետության համար: ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածը սահմանում է, որ մարդու և քաղաքացու առանձին հիմնական իրավունքները ու ազատությունները կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես սահմանափակվել ուազմական կամ արտակարգ դրույթյան ժամանակ՝ արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում: Այսինքն՝

• մարդու և քաղաքացու որոշ հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել ժամանակավորապես,

• սահմանափակման ենթակա չեն կյանքի (հոդ. 15), խոշտանգումների արգելման (հոդ. 17), դատական, հանրագրի (պետիցիայի), մարդու իրավունքների պաշտպանին դիմելու, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին դիմելու (հոդ. 18), դատարանի մատչելիության (հոդ. 19), ձերբակալման, խսփանման միջոցի ընտրման և մեղեդրանքի առաջարրման պահից պաշտպան ունենալու (հոդ. 20), անմեղության կանխավարկածի իրավունքից օգտվելու (հոդ. 21), ամուսնու կամ մերձավոր ազգականի վերաբերյալ ցուցմունք տալուց հրաժարվելու իրավունքները (հոդ. 22), ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածով սահմանված իրավունքները,

• այդ իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն արտակարգ և ուազմական դրույթյան ժամանակ,

• այդ իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակում:

Ասվածից պարզորդ հետևում է, որ Հայաստանի Հանրապետության Նախագահը նախ, սահմանված կարգով, պետք է հայտարարի ուազմական կամ արտակարգ դրույթյուն (Դաշնագրի 4-րդ հոդ.) և նոր միայն ձեռք բերի ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածով սահմանված մարդու իրավունքները և ազատությունները ժամանակավոր սահմանափակելու լիազորություն: Վերջինիս այդ լիազորության իրականացումը կարող է համարվել իրավաչափ միայն այն դեպքում, եթե ուազմական կամ արտակարգ դրույթյուն է հայտարարվում բավարար հիմքերի առկայության դեպքում (Կոնվենցիա 14-րդ և 15-րդ հոդ.):

Նոյն հոդվածի 14-րդ կետը սահմանում է, որ սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում ՀՀ Նախագահը հայտարարում է արտակարգ դրույթյուն և իրականացնում է իրավիճակից բելազրող միջոցառումներ: Նոյն կետում նշվում է նաև, որ արտակարգ դրույթյան

իրավական ռեժիմը նույնպես սահմանվում է օրենքով: Սակայն, Սահմանադրության ընդունումից ի վեր ՀՀ-ում չի ընդունվել այս իրավահարաբերությունը կարգավիրող օրենք:

Գիտնականներից ոմանք գտնում են, որ հենց այս նորմի գոյությունը ապացույց է այն բանի, որ այս իրավահարաբերությունները կարգավիրող օրենքի բացակայությունը իրավական խոշընդուռ չէ ՀՀ Նախագահի կողմից ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածով և 55-րդ հոդվածի 14-րդ կետով ամբողջապահ լիազորություններից օգտվելու համար: Մենք այս տեսակետի հետ լրիվ չենք կարող համաձայնվել, բանի որ, եթե նույնիսկ ՀՀ Նախագահն այլ ելք չիմելու պատճառաբանությամբ իրավիճակից թելադրող գործողություն է իրականացրել, ընդունելով հրամանագիր, այնուհանդերձ դա չէր խանգարում Ազգային ժողովին ողջամիտ ժամկետում ընդունել տվյալ իրավահարաբերությունը կարգավիրող օրենքը: Չնայած, որ նրա երկու տարվա ընթացքում օրենքը ընդունելու պարտականությունը բխում էր ՀՀ Սահմանադրության 117-րդ հոդվածի 1-ի կետի պահանջներից:

Կարևորագույն խնդիր է իրենից ներկայացնում նաև ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների՝ մասնավորապես արտակարգ դրության հաստատման իրականացման կարգը: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովը, ուսումնասիրելով անդամ-պետությունների հաշվետվությունները, նշել է, որ ավելի մեծ ուշադրություն պետք է դարձնել իրավունքի սահմանափակման համաշխատության խնդրին և որ համաշխատության սկզբունքից է բխում՝ պարտավորություններից շեղում պարունակող նորմերը պետք է լինեն մանրամասն իիմնափորված<sup>6</sup>: Սա նշանակում է, որ արտակարգ դրություն հաստատելու մասին ՀՀ Նախագահի հրամանագիրը, արտակարգ դրության իրականացման կարգը և ցանկացած կոնկրետ դեպքի համար կայացված վարչական ակտը պետք է լինի մանրամասն փաստարկված և իիմնափորված:

Կոնվենցիայի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Յանկացած Բարձր պայմանավորվող կողմ, օգտագործելով շեղվելու այդ իրավունքը, Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ամբողջությամբ իրազեկում է իր կիրառած միջոցառումների և դրանք կիրառելու դրդապատճառների մասին: Իսկ Դաշնագրի 4-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն շեղվելու իրավունքից օգտվող ցանկացած անդամ-պետություն ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարության միջնորդությամբ դաշնագրի մասնակից մյուս պետություններին պետք է տեղեկացնի այն դրույթների

մասին, որոնցից ինքը շեղվել է, և այնիսի որոշում կայացնելու դրդապատճառների մասին: Նույն միջնորդի միջոցով, հետագայում, հաղորդում է նաև այդ շեղումը դադարեցնելու ամսաթվի մասին:

Ինչպես Եվրոպայի խորհրդի ցանկացած անդամ պետություն, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունը, պարտավոր է Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին անմիջապես ամբողջությամբ իրազեկել իր կիրառած միջոցառումների և դրանք կիրառելու դրդապատճառների մասին, ինչպես նաև միջոցառումների գործողությունը դադարեցնելու և Կոնվենցիայի դրույթների լիակատար իրազորումը վերսկսելու մասին:

2008 թ. միջազգային այս պարտավորությունը ոչ պատշաճ կատարելու հետևանքով Հայաստանի Հանրապետությունը արժանացավ Եվրոպայի խորհրդի քացանական գնահատականին: Մասնավորապես՝ երբ 2008 թվականի մարտի 1-ին ՀՀ Նախագահի ՆՀ-35-Ն հրամանագրի հիման վրա Հայաստանի Հանրապետությունում հաստատվեց արտակարգ դրույթը և անմիջապես շտեղեկացվեց Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին, Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Թերիքի Դեյվիս Աշեց. «Ըստ մտահոգված եմ Երևանում վերջին զարգացումների և արտակարգ դրության հայտարարման վերաբերյալ: Արտակարգ իրազությունը ժամանակավորապես դադարեցնում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով պաշտպանված մի շաբթ իրավունքների և ազատությունների ապահովումը: Կոնվենցիայի 15-րդ հոդվածով Հայաստանի կառավարությունը ինձ պետք է իրազեկի իր կիրառած միջոցառումների և դրանք կիրառելու դրդապատճառների մասին: Ակնկալում եմ, որ նրանք դա կանեն առանց ուշացման»(Մարտարարության 02.03.2008թ.):

Այնուհետև, անդրադառնալով վերոնշյալ խնդրին, ԵԽ մարդու իրավունքների հանձնակատար Թոմաս Համմարբերգը նշեց. «Ես մտահոգված եմ Հայաստանում մարդու իրավունքների վիճակով և արտակարգ դրության հայտարարման հետևանքներով: [...] Հայատապ է վերականգնել այն իրավիճակը, երբ լրատվամիջոցների, քաղաքական կուսակցությունների և ոչ կառավարական կազմակերպությունների գործունեությունը չի խոչընդոտվում»:

Հայաստանի արտակարգ դրույթուն հայտարարելուց հետո ատեղծված իրավիճակին անդրադառնալով նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի նախագահ Յան Կուրիշն իր հայտարարությամբ, որում հույս է հայտնել, որ արտակարգ դրույթունը շուտով կիանվի, ինչպես նաև կչեղոքացվեն բոլոր սահմանափակումներն ու միջոցառումները, որոնք հետևեցին արտակարգ դրույթին հայտարարմանը<sup>10</sup>:

Դրան հաջորդեց 2008 թվականի մարտի

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

13-ի ՀՀ Նախագահի ՆՀ-38-Ն հրամանագիրը, նախորդ Վերը նշված հրամանագրում փոփոխություններ կատարելու մասին, որը մասնավորապես վերացրեց քաղաքական կուսակցությունների և ոչ կառավարական կազմակերպությունների գործունեության կասեցման մասին դրույթը: Դրանից հետո Հայաստանում ընտրությունների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժնողովի (ԵԽԽՎ) գեկուցող Զոն Պրեսկոտը ողջունեց Հայաստանում արտակարգ իրավիճակի երկու դրույթների վերացումը, նաև, մասնավորապես, ասաց. «Ես հատկապես ողջունում եմ քաղաքական կուսակցությունների և ոչ կառավարական կազմակերպությունների գործունեության կասեցման մասին դրույթի չեղյալ հայտարարումը, որի վերաբերյալ ես հատուկ կոչ արեցի իմ այցի ընթացքում: Այժմ ես կոչ եմ անում իշխանություններին հանել արտակարգ իրավիճակի մնացած դրույթները, մասնավորապես նրանք, որոնք սահմանափակում են լրատվամիջոցների ազատությունը: Ես կրկնում եմ իմ այն եզրակացությունը, որ ներկա ճգնաժամի հանգուցալունան միակ եղանակը նախագահական ընտրությունների արդյունքների վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշման ճանաչումն է, արտակարգ դրույթան հանումը և մարդու իրավունքների ու ազատությունների վերականգնումը և 2008թ. մարտի 1-ի իրադարձություններին հանգեցրած հանգանակների անկախ հետաքննումն ու քաղաքական բոլոր ուժերի միջև երկխոսության ժավալումը անհրաժեշտ քաղաքական և ընտրական բարեփոխումների վերաբերյալ»:

Ուսումնասիրությունների արդյունքում եկանք այն եզրահանգման, որ մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակման իրավական ոեժմի քացառապես օրենքով սահմանման պահանջը բխում է ուղղակի ՀՀ Սահմանադրություններին անհրաժեշտ է ոչ միայն Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրույթան իրավական ոեժմի հետ կապված հարաբերությունները կարգավորելու, այլ նաև դրանց իրականացման կարգը սահմանելու համար:

Հաշվի առնելով իրավունքների սահմանափակման իրավական ոեժմը օրենքով սահմանափակելու սահմանադրական պահանջ՝ անհրաժեշտություն է առաջանում ընդունել օրենք, որով կարգավորեն արտակարգ դրույթան իրավական ոեժմի և արտակարգ դրույթան ժամանակ Հայաստանի Հանրապետությունում մարդու և քաղաքացու առանձին հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումների հետ կապված իրավահարաբերությունները: Օրենքի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ինչպես Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 44-րդ հոդվածով, այնպես էլ՝ ՀՀ Սահմա-

նադրության 55-րդ հոդվածի 14-րդ կետով ամրագրված՝ «Արտակարգ դրույթան իրավական ոեժմը սահմանվում է օրենքով» դրույթով: Օրենքի ընդունման անհրաժեշտությունը բխում է նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.5-րդ հոդվածի պահանջից, համաձայն որի՝ նշված բոլոր դրույթները կարող են սահմանվել քացառապես օրենքով:

«Արտակարգ դրույթան իրավական ոեժմի մասին» օրինագիծը մի քանի անգամ ընդգրկվել է ՀՀ Ազգային ժողովի նախարարական պայմանագրական օրակարգ, բայց այդպես էլ մինչև օրս չի ընդունվել<sup>12</sup>: «Արտակարգ դրույթան իրավական ոեժմի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով սահմանվում է, որ արտակարգ դրույթան իրավական ոեժմը ժամանակավոր միջոցառում է, որը հայտարարվում է քացառապես Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում: Արտակարգ դրույթյունը հայտարարվում է միայն այն հանգանգների առկայության դեպքում, որոնք անմիջական վտանգ են ներկայացնում Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգին և այդ վտանգի վերացումն անհնարին է առանց Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների ու քաղաքացիություն չունեցող անձանց և կազմակերպությունների՝ սույն օրենքով նախատեսված առանձին հիմնական իրավունքների ու ազատությունների ժամանակավոր սահմանափակումների:

Նախագծով սահմանվում է՝ արտակարգ դրույթուն հայտարաբելու կարգը (հոդ. 3), արտակարգ դրույթուն հայտարաբելու մասին Հայաստանի Հանրապետության Նախագահի իրամանագրի բովանդակությունը (հոդ. 4), արտակարգ դրույթան գործողության ժամկետը (հոդ. 5), արտակարգ դրույթան դադարման իմմքերը (հոդ. 6), արտակարգ դրույթուն հայտարարվելու դեպքում կիրառվող միջոցառումները և իրավունքների ժամանակավոր սահմանափակումները (հոդ. 7), արտակարգ դրույթուն հայտարարված տարածքում պետական հատուկ կառավարման մարմինները (հոդ. 8), արտակարգ դրույթան իրավական ոեժմն ապահովող միջոցները և ուժերը (հոդ. 9), արտակարգ դրույթան պայմաններում կիրառվող միջոցների և ժամանակավոր սահմանափակումների սահմանմերը (հոդ. 10), արտակարգ դրույթան գործողության ընթացքում ֆիզիկական եւ իրավաբանական անձանց իրավունքների երաշխիքները (հոդ. 11), ֆիզիկական ուժի, հասուկ միջոցների, զենքի և մարտական տեխնիկայի կիրառման պայմաններն ու սահմանները (հոդ. 12), պարետային ժամի կանոնները խախտած անձանց ձերբակալման կարգը (հոդ. 13), արտակարգ դրույթունը դադարած հայտարաբելու իրավական հետևանքները

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

(հոդ. 14), արտակարգ դրության իրավական ռեժիմի պահանջները խախտած ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև պաշտոնատար անձանց պատասխանատվությունը (հոդ. 15) և այլն:

Սակայն, սույն օրինագծում, մեր կարծիքով, կան որոշակի բացըողումներ: Մասնավորապես՝ օրինագծի՝ «Արտակարգ դրությանը և արտակարգ դրության համար հիմք հանդիսացող հանգամանքները» վերտառությամբ 1-ին հոդվածի 2-րդ մասը, մեր կարծիքով, ուղղակի կրկնում է ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 14-րդ կետի 1-ին մասի ընդհանուր ձևակերպումը, մինչդեռ մենք գտնում ենք, որ վերոնշված օրինագիծը պետք է բացի այս ընդհանուր ձևակերպումը: Մասնավորապես՝ վերոշարադրյալ օրինագծի 1-ին հոդվածը կարող է ձևակերպվել այսպես՝

1. արտակարգ դրությունը՝ Հայաստանի Հանրապետության ամրող տարածքում կամ նրա որոշ տարածքներում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համաձայն հայտարարվող պետական կառավարման և տեղական ինքնականացման մարմինների, կազմակերպությունների (անկախ նրանց կազմակերպական-իրավական ձևից), ինչպես նաև նրանց պաշտոնատար անձանց գործունեության հատուկ իրավական ռեժիմ է, որը ներառում է հետևյալ հանգամանքները՝

ա) ՀՀ սահմանադրական կարգի բոնի փոխելու փորձերը, իշխանության զավթումը կամ յուրացումը, զինված ամսատամբությունը, զանգվածային անկարգությունները, ահարեւշական գործողությունները, առանձնապես կարևոր օրյեկտների կամ առանձին բնակավայրերի բռնագրավումը, ապօրինի զինված խմբերի գործողությունները, բռնի գործողություններով ուղեկցվող էթնիկական, աղանդակորական և տարածաշրջանային այն հակամարտությունները, որոնք անմիջական սպառնալիք են հանդիսանում քաղաքացիների կյանքի և անվտանգության, պետական և տեղական ինքնականացման մարմինների բնականոն գործունեության համար,

բ) բնական և տեխնածին աղետները, բնապահպանական արտակարգ իրավիճակները, այդ բվում վրաբների հետևանքով առաջացող համաձարակները, բնական աղետները, որոնք հանգեցնում են մարդկային կուրուտների, կամ վնաս են պատճառում մարդու առողջությանը և շրջակա միջավայրին, կամ առաջացնում են զգակի նյութական վնասներ և խախտում են բնակչության բնականոն կյանքը և պահանջում են լայնածավալ փրկարարական աշխատանքներ և այլ անհետաձգելի գործողություններ:

Օրինագիծը չի կարգավորում արտակարգ դրության գործողության ժամանակահատվածը: Ցանկալի կիրար, որ նշվեր արտակարգ դրության

գործողության առավելագույն ժամկետ, որպեսզի ՀՀ իշխանություններին գերծ պահեինք կամայականություններից: Օրինակ՝ այս իրավահարաբերությունները կարգավորող ՈԴ համապատասխան օրենքի 9-րդ հոդվածը նշում է, որ ՈԴ ամբողջ տարածքում հայտարարված արտակարգ դրության ժամկետը չի կարող 30 օրից ավելի լինել, իսկ առանձին վայրերում՝ 60 օրից: Ցանկալի կիրար, որ նշված օրինագծում ևս նշվեր արտակարգ դրության գործողության վերին շեմ:

«Արտակարգ դրություն հայտարարելու կարգը» վերտառությամբ 3-րդ հոդվածի 3-րդ մասը կարելի է հստակեցնել, մասնավորապես՝

«3. Ամրողացությամբ իրազեկել Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ՀՀ կիրառած միջոցառումների և դրանք կիրառելու դրդապատճառների մասին:»

**ԱԱԿ-ի** գլխավոր քարտուղարության միջնորդությամբ տեղեկացնել դաշնագրի մասնակից մյուս պետություններին այն դրույթների մասին, որոնցից Հայաստանի Հանրապետությունը շեղվել է, և այդպիսի որոշում կայացնելու դրդապատճառների մասին:

Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների շրջանակում իրազեկել բոլոր այն մարմիններին, որոնց իրազեկման պարտավորություն է ստանձնել ՀՀ-ն»:

Հոդված 14-ում ավելացնել 2-րդ և 3-րդ մաս, որոնք կարող են ունենալ հետևյալ բովանդակությունը՝

«2. Անմիջապես ծանուցել Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին արտակարգ դրության հետ կապված միջոցառումների գործողությունը դադարեցնելու և Կոնվենցիայի դրույթների իրագործումը վերսկսելու մասին:»

3. **ԱԱԿ-ի** գլխավոր քարտուղարության միջնորդությամբ հաղորդել դաշնագրի մասնակից մյուս պետություններին շեղումը դադարեցնելու մասարվի մասին»:

Ճիշտ է, ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ վավերացված միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մաս են, սակայն, մեր կարծիքով, այս նորմերի ամրագրումը գերծ կապահի ՀՀ-ին վերոնշյալ պարտավորությունների հետ կապված հետագա խնդիրներից:

Զննարկվող հիմնախնդրի այլընտրանքային տարրերակ կարող է լինել ՀՀ սահմանադրական դատարանի լիազորությունների ընդլայնումը: Մասնավորապես, կարելի է ՀՀ սահմանադրական դատարանին վերապահել, ինչպես եվրոպական մի շարք երկրներում (ԳԴՀ, Պորտուգալիա, Լեհաստան, Իտալիա), օրենսդրական բացի սահմանադրությանը քննելու իրավասություն: Այսինքն՝ ՀՀ

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրության 100-րդ հոդվածով նախատեսվեր հատուկ նորմ, համաձայն որի՝ քաղաքացիների դիմումի հիման վրա սահմանադրական դատարանը հակասահմանադրական ճանաչեր օրենսդրական բացերը, որոնք խոչընդոտում են սահմանադրական նորմերի իրացմանը:

Անփոփելով վերոշարադրյալը՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է արտակարգ դրույթան իրավական ռեժիմը կարգավորող օրենքի ընդունումը։ Այդ օրենքի բացակայությունը կարող է առաջացնել լուրջ քաղաքական հետևանքներ ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային հարաբերություններում։ Նշված ոլորտում միջազգային պարտավո-

րությունների իրականացման կարգը հստակեցված չլինելու պատճառով Հայաստանի Հանրապետությունը արժանացել է միջազգային կառույցների կոշտ գնահատականին։ Արտակարգ դրույթան իրավական ռեժիմի իրավահարաբերությունները կարգավորող օրենքի ընդունման անհրաժեշտությունը բխում է նաև ՀՀ Սահմանադրության 44, 55 և 83.5-րդ հոդվածներից։ Իսկ ՀՀ սահմանադրական դատարանի լիազորությունների ընդլայնումը կտար այս խնդիրը ավելի արագ և արդյունավետ լուծելու հնարավորություն։

<sup>1</sup> Տե՛ս <http://www.concourt.am/hr/indexa.htm>

<sup>2</sup> Տե՛ս Մարդու իրավունքների միջազգային թիվ, ՍՎԿ-ի հայաստանյան գրասենյակ, Երևան, էջ 41։

<sup>3</sup> Տե՛ս Human Rights Committee, General Comment 29, Derogations during a ...[www1.umn.edu/humanrts/Russian](http://www1.umn.edu/humanrts/Russian) Замечание общего порядка 29. Отступление от прав в связи с чрезвычайным положением (статья 4), 2001\* „, принятто на 1950-м заседании 24 июля 2001 года.

<sup>4</sup> Տե՛ս Հունաստանի ընդդեմ Մեծ Բրիտանիայի 1969թ.։

<sup>5</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ, էջ 521։

<sup>6</sup> Տե՛ս Human Rights Committee, General Comment 29, Derogations during a ...[www1.umn.edu/humanrts/Russian](http://www1.umn.edu/humanrts/Russian) Замечание общего порядка 29. Отступление от прав в связи с чрезвычайным положением (статья 4), 2001\* „, принятто на 1950-м заседании 24 июля 2001 года. 5

<sup>7</sup> Տե՛ս [http://www.coe.am/index.php?cat\\_id=37](http://www.coe.am/index.php?cat_id=37)

<sup>8</sup> Տե՛ս <http://www.coe.am>, մարտի 3-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունը Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ծանուցեց արտակարգ իրավիճակի ընթացքում Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայից շեղումների մասին՝ համաձայն Կոնվենցիայի հոդված 15-ի։

<sup>9</sup> Տե՛ս <http://www.coe.am/pressreleases.php?id=398>,Հայաստան, Հանձնակատար Համբերգն այցելում է Երևան հետքնտրական բռնություններին հաջորդող մարդու իրավունքների պաշտպանության խրախուսման նպատակով։ Ստրափորգ 11.03.2008թ.։

<sup>10</sup> Տե՛ս <http://www.coe.am/pressreleases.php?id=382>, Իրավիճակը Հայաստանում։ Եվրոպայի խորհրդի նախարարների կոնֆերենցիա նախագահ Յան Կուրիշի հայտարարությունը, Ստրափորգ, 04.03.2008թ.։

<sup>11</sup> Տե՛ս <http://www.coe.am/pressreleases.php?id=394>, Զոն Պրեսկուրը ողջունում է Հայաստանում արտակարգ իրավիճակի երկու դրույթների վերացումը, Ստրափորգ, 10.03.2008թ.։

<sup>12</sup> Տե՛ս 01.10.2007 - Ընդգրկվել է նատաշրջանի օրակարգ, 21.10.2009 - Ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը, 01.02.2010 - Ընդգրկվել է նատաշրջանի օրակարգ։

### РЕЗЮМЕ

#### *Проблемы ограничения прав и свобод человека в чрезвычайных ситуациях.*

В статье автор рассматривает проблему ограничения прав и свобод человека во время чрезвычайных ситуаций. По мнению автора основная проблема состоит в том, что в Республике Армения еще нет закона “О чрезвычайной ситуации” и это не соответствует требованиям пункта 14 статьи 55, пункта 1 статьи 83.5 и пункта 1 статьи 117 Конституции РА. Автор анализировал законопроект “О правовом режиме чрезвычайных ситуаций” и сделал некоторые предложения. В заключении автор отметил необходимость принятия соответствующего закона.

### SUMMARY

#### *The problem of restriction of human rights and freedoms in time of emergency.*

The issue of the article is restriction of the rights and freedoms in time of emergency. According to the author the main problem is that in the Republic of Armenia there is lack of law on emergency, and it does not meet to the requirements of paragraph 14 of Article 55, paragraph 1 of Article 83.5, paragraph 1 of Article 117 of the Constitution of the RA. The author analyzed the draft law “On legal regime in time of emergency” and made her proposal. In conclusion, the author noted the need for adopting appropriate law.